ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2024 թվականի N 102- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հունվարի 10-ի N 7-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 23-ին կայացած նիստի N 8 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 68 /վաթսունութ/ քաղաքացիների՝ սոցիալական աջակցության նպատակով հատկացնել միանվագ դրամական օգնություն ընդհանուր 4 180 000 /չորս միլիոն մեկ հարյուր ութսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-04-25 17:39:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2024թ. ապրիլի 23
ք.Իջևան